ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Օգոստոսի 5ին Ստեփանակերտում տեղի ունեցաւ ԼՂԻՄի Մարզխորհրդի գործադիր կոմիտէի նիստ, որի ժամանակ քննարկուեց Ադրբեջանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին արցախցիների մասնակցութեան հարցը։ Նիստում ելոյթ ունեցաւ Մարզգործկոմի նախագահի պաշտօնակատար Լէոնարդ Պետրոսեանը, որը անցած շաբաթ էր վերադարձել Մոսկուայից, որտեղ հանդիպումներ էր ունեցել ԽՍՀՄ փոխնախագահ Եանայեւի, Կրիւչկովի, Պուգոյի եւ երկրի այլ բարձրաստիճան պաշտօնեաների հետ։ Քննարկուած հարցի մասին Մարզգործկոմը ընդունել է որոշում, սակայն այդ որոշման մասին հասարակայնութեանը չի յայտնուել։

Մարզգործկոմը իր հաւանութիւնն է տուել Մարզի բնակչութեան մասնակցութեանը Ադրբեջանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին, այն պայմանով, որ նախագահի ընտրութիւններին զուգահեռ պէտք է անցկացուեն մարզխորհրդի պատգամաւորների ընտրութիւններ։